

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՑ.
ՄՈՍԿՎԱ ~~ՊՐԻՆՏ~~ ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

ՅՈՒ. ՅԱՐԱՆ
(Զայչենկո)

ԻՆՉ ՊԵՏՔ Ե
≡ ԳԻՏԵՆԱ ≡
ՏՐԱԿՏՈՐԻԱՏԸ

ԹԱՐԳ. 2. Մ.

631.3

S - 26

1931

30 JUL 2011

631.3

ալ.

S-26

Յ Ո Ւ Ն Ս Ա Ր Ա Ն

(Չայֆեմկո)

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱ
ՏՐԱԿՏՈՐԻՍԸ**

CS-7688
8837-53

Ն Ա Խ Ա Բ Ա Ն


Մենք ապրում ենք սոցիալիզմի շինարարության մեծ ժամանակաշրջանը:

Մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը զարգանում են մարդկության պատմության մեջ դեռևս չտեսնված տեմպերով: Ինդուստրացումը թափանցում է խորհրդային տնտեսական օրգանիզմի բոլոր խորքերը, բոլոր վանդակները:

Ցարական կարգերում Ռուսաստանը յետամնաց գյուղատնտեսական յերկիր էր:

Պրոլետարիատի ղեկառուրայի ժամանակ ԽՍՀՄ դառնում է կառուցվող սոցիալիզմի ինդուստրիալ յերկիր:

Տասնյակ, հարյուրավոր ու հազարավոր նոր ֆաբրիկաներ, գործարաններ, հալոցքներ ու շոգեշարժեր ամրապնդում են սոցիալիստական արդյունաբերությունը: Գյուղատնտեսական արտադրությունը,



սովխոզներն ու կոլխոզները անհատական, մանր-
սեփականատիրական գյուղատնտեսությունը վերա-
կառուցում են սոցիալիստական խոշոր տնտեսության:

Տրակտոր սելսիկական հեղափոխությունն է
մեզնում գյուղում: Տնտեսությունը վարել այնպես,
ինչպես վարում էին մեր հայրերն ու պապերը—արո-
րով, ձիով ու յեզով—չի կարելի: Հարկավոր են նոր
ձևեր, նոր մեթոդներ, նոր միջոցներ: Գյուղատնտե-
սությունը համատարած կոլեկտիվացման, մեքենա-
յացման, տրակտորացման է յենթարկվում:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը մեզա-
նում գյուղացիական տնտեսությունները տրակ-
տորներ չէին բանեցնում: Հիմա ԽՍՀՄ-ում գյուղա-
տնտեսության մեջ աշխատում է ավելի քան 100
հազար տրակտոր:

Մինչև այժմ մենք տրակտորները ներմուծում
էինք Ամերիկայից (Փորզից և ուրիշ կապիտալիստ-
ներից): Հիմա մեզնում գարգանում է սեփական տրակ-
տորային արտադրությունը:

Այս տնտեսական տարվանից Լենինգրադի «Կար-
միր Պուտիլովեց» գործարանը տարեկան բաց է
թողնելու 40 հազար տրակտոր:

Ստալինգրադի տրակտորային գործարանը պիտի
պատրաստի 6 րոպելում մի տրակտոր (տարեկան
80 հազար հատ), Մոսկվայի, Սարկովի, Չապարոֆեյի
և Չելյաբինսկի գործարանները նույնպես մեր յերկ-
րին կտան տասնյակ հազարավոր «պողպատյա ձի-
ներ»:

Տրակտորակառուցման ասպարիզում ԽՍՀՄ կլինի
աշխարհում առաջին յերկիրը:

Պողպատյա ձիերը—տրակտորները—կպահան-
ջեն հարյուր հազարավոր յերիտասարդ ձիավորներ—
տրակտորիստներ:

Բատրակ—չքավոր յերիտասարդությունը, կոլ-
խոզնիկները, կոմյերիտականները պետք է գիտենան,
թե ինչպես են կառուցված և ինչպես են աշխա-
տում «պողպատյա ձիերը»—տրակտորները—և պետք
է գիտենան թամքել նրանց, վորպեսզի տեխնիկայի,
մեքենայի ոգնությամբ հասնեն համատարած կոլեկ-
տիվացման ավարտման և նրա հիմունքով կուլակի
իբր դասակարգի վերացման, գյուղատնտեսության
սոցիալիստական վերակառուցման:

Այդ վերակառուցումը հնարավոր դարձավ մեր
յերկրի ինդուստրացման խոշորագույն հաջողություն-
ների հիմունքով և մեր աչքի առջև այժմ տեխնիկա-
կան հեղաշրջում է տեղի ունենում գյուղատնտե-
սության մեջ:

Հեղինակ

Ռոստով-Դոն
9 հունվարի 1931 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ ՏՐԱԿՏՈՐԻ ՄԱՍԻՆ

Տրակտորը—գա ինքնաշարժ մեքենա յե, վորը կարող է գանադան աշխատանքներ կատարել գյուղատնտեսութեան մեջ, տրանսպորտում և ուղղմական ասպարիզում:

Տրակտորը կազմված է չորս գլխավոր մասերից. —1)շարժիչ կամ մոտոր, վորը մեքենայական ուժ է արտադրում, 2) հաղորդիչ մեխանիզմ, 3) ընթացքի մեխանիզմ (անիվներ) և 4) ղեկավարման մաս:

Տրակտորի («Ֆորդոն», «Կարմիր Պուտիլովեց») ամենագլխավոր մասը հանդիսանում է 20 ձիու ուժ ունեցող, ներքին այրման քառազանգանակ, քառա-սակս (четырёхцилиндровый, четырёхтактный) շարժիչը (տես նկար 1-ին):

Շարժիչը կամ մոտորը կազմված է բլոկից—չորս գլանների միացումից, իսկ ամեն մի գլանում ներքև ու վերև է շարժվում գլանաձայրը: Այս մասնիկի վրա, նրա փոսիկներում տեղավորված են յերեք ձեղքաձև (разрезной) զսպանակավոր ողակներ, գլաններն ամուր փակելու համար:


Այն տարածութունը, վոր գլանաձայրը գլանի

մեջ անցնում է վերևից ներքև, կոչվում է գլանա-ձայրի անցք (ход поршня): Գլանաձայրի ամենավերին դիրքը կոչվում է վերին մեռյալ կետ, իսկ ներքևի դիրքը—ներքին մեռյալ կետ (верхняя и нижняя мертвая точка):

Գլանաձայրին պողպատյա մասով (узел) ամրացված է շարժուն ձողիկը (шатун): Մրա վերին մասը—գլխիկը, մատին ամրացվում է սեղմիչ պտուտակով (стержневой винт): Շարժուն ձողիկի ներքևի ծայրը առանցքակալով (подшипник), վորի մեջ լցվում է փափուկ մետաղ—բաբիտ (бабит)—բոլորտով ու պտուտակով (гайка) ամրացվում է ծընկած և գլանի վրա:

Ծնկած և գլանը յերեք հիմնական առանցքակալներով (առջևի, միջին և յետևի) ամրացված է տրակտորի մարմնին և ազատ պտտվում է: Ծնկած և գլանակը նրա համար է, վորպեսզի գլանաձայրի ուղղագիծ շարժումը վերածի պտույտի: Մեկ րոպեյում նա պտտվում է 1000 անգամ: (կատարում է 1000 շրջան): Ծնկած և գլանակին ամրացված են չորս շարժուն ձողիկներ՝ գլանաձայրերով: Նրա առջևի ծայրին գտնվում է փոքր բաշխիչ ատամնավոր անիվը, փոքրիկ մախովիկը՝ ողամարբիչի համար և փոքրիկ խրապովիկը (храповичок) լարելու կոթի (заводная ручка) համար: Յետևի ծայրում տեղավորված է մախովիկը (маховик), մոտորի ընթացքի հավասարակշռութեան համար (վերին և ներքին մեռյալ կետերից գուրս բերելու (вывод) համար):

Իր շարժման ժամանակ գլանաձայրը (поршень)



Նկար 1-ին Տրակտորի մոտորը

Նկար 1: 1) Ողամաքրիչ, 2) լեզվակի խողովակ, (гильза клапана), 3) լեզվակի զսպանակ, 4) մղիչ, 5) յուղ լցնելու անոթ, 6) մեծ, բաշխիչ աստմնավոր անիվ (шестерня), 7) կոմուտատոր, 8) ողամաքրիչի (вентелятор) փոկ, 9) Թաղիքյա ող (войлочная шайба), 10) ողամաքրիչի շարժիչ անիվ (приводный шкив вентилатора), 11) լարման կոթի բեռեղի (шпилька пусковой ручки), 12) արգելման ողակ (ропорное кольцо), 13) լարման կոթի զսպանակ, 14) լարման կոթի լծակ, 15) լարման կոթի ծայր, 16) մոտորի առջևի կախարիչ, 17) փոքր բաշխիչ աստմնավոր անիվ, 18) առջևի արմատային առանցքակալ (передний коренной подшипник), 19) բաշխիչ գլան, 20) ծնկաձև գլան, 21) կարտեր (картер), 22) կարտերի պտուտակն իր գլխիկով (картерный винт с гайкой), 23) Միջին արմատային առանցքակալ, 24) յուղի մակերևութի, 25) յուղատար ձորակներ, 26) արձակիչ խցան (спускная пробка), 27) մագնետոյի ճախարակների պլան-ող (планшайба), 28) մագնիսներ, 29) մախովիկ (маховик), 30) մախովիկի բեռեղի, 31) յետևի արմատային առանցքակալ, 32) շարժուն ձողիկ (шатун), 33) յուղախողովակ, 34) գլանածայրի մատ (поршневой палец), 35) գլանի ողակ, 36) գլանածայր, 37) սառեցնող շապիկ, (охладительная рубашка), 38) խտացման կամերա (камера сжатия), 9) գլանների գլխիկ (головка цилиндров), 40) գլանների գլխիկի բլրոտ, 41) ռազիատորի վերին միացման ծունկ, 42) արտաթորող լեզվակ, (выпускной клапан), 43) ներածող լեզվակ (впускной клапан), 44) մոմ (свеча):

չի հասնում մինչև գլանների (цилиндр) գլխիկի վերևի մասը: Այն տարածութունը, վորը գանվում է գլանի ներսում, գլխիկի և գլանածայրի միջև, կոչվում է խտացման կամերա, վորովհետև այնտեղ կատարվում է գազերի խտացում, վորոնք լցվում են գլանների մեջ:

Վերևից այդ գլանները փակվում են իրենց ընդհանուր գլխիկով:

Գլանների գլխիկի և բլոկի միջև տեղավորված

ե պղնձե—սաքեստային միջազիրը (прокладка), նը-
րանց ամուր միացնելու համար:

Ներքեից ամբողջ մոտորը փակված է կարտերով:
Գլխիկը գլանների կողքին ամրացվում է բոլորերով,
իսկ կարտերը—պտուտակներով:

Յուրաքանչյուր գլան վերևում ունի յերկուս-
կան անցք՝ արտաթորող և ներածող լեզվակների հա-
մար և մի այլ անցք՝ ելեկտրական մումը պտուտա-
կելու համար:

Գլանների բլրիկը (блок цилиндров) վերեից
ծածկված է սառեցնող ՇԱՍԻԿՈՎ, վորի մեջ գտըն-
վում է ջուրը:

Լեզվակները, վորոնք փակում են գլանի անց-
քերը, հարկավոր և ճիշտ վորոշված մոմենտներին
բացվում ու փակվում են՝ գլանի մեջ վառվող հառ-
նուրդը ներածելու և արդեն այրված գազերն ար-
տաթորելու համար: Ընդամենը կա 8 լեզվակ: Յու-
րաքանչյուր լեզվակ բաղկացած է պողպատյա կո-
թից և թուջյա (չուգուն) գլխիկից: Լեզվակները տե-
ղավորվում են իրենց ուղղությունն աժող (направ-
лениями) խողովակներում: Նրանք (լեզվակները)
բացվում են բաշխիչ գլանակով, վորի վրա, տար-
բեր տեղերում կան 8 ցցվածքներ (եկսցենտրիկներ):
Բաշխիչ գլանակը մեծ, բաշխիչ ատամնավոր անիվի
միջոցով միացված է ծնկաձև գլանակի փոքր, բաշ-
խիչ ատամնավոր անիվի հետ և նրա միջոցով էլ պը-
տտվում է: Բաշխիչ գլանակի վրայի ատամնավոր
անիվն յերկու անգամ մեծ է ծնկաձև գլանակի ա-
տամնավոր անիվից, այս պատճառով բաշխիչ գլա-
նակը մեկ բոպելում կատարում է հինգ հարյուր

շրջան: Բաշխիչ գլանակի կատարած շրջանների ժա-
մանակ նրա եկսցենտրիկները շրջվելով, սեղմում են
մղիչներին, սրանք էլ խողովակներին, վորոնք բաց-
վում են հարվավոր մոմենտներին: խողովակները
փակվում են նրանց վրայի գազանակների ոգնու-
թյամբ:

Շարժիչի ամբողջ աշխատանքը կատարվում է
ծնկաձև գլանակի կատարած յերկու շրջանի և գը-
լանածայրի չորս ընթացքի կամ տակտի (Կերքե—վե-
րև, ներքև—վերև) ժամանակ:

ՏԱԿՏԵՐԸ ԿՈՉՎՈՒՄ ԵՆ՝

Առաջինը—ներծծում (всаживание),

Յերկրորդը—խտացում (сжатие),

Յերրորդը—բանուկ ընթացք (рабочий ход),


Չորրորդը—արտամղում (выпуск):

Դրա համար էլ շարժիչը կոչվում է ԲԱՍԱՍԱԿՍ:

Չորս գլանանի, քառատակտ շարժիչի մեջ այս-
պես և տեղի ունենում աշխատանքը:

Գլաններ	Գլանակի առաջին շրջան		Գլանակի յերկրորդ շրջան	
	Առաջին ընթացք	Յերկրորդ ընթացք	Յերրորդ ընթացք	Չորրորդ ընթացք
Առաջին	Ներածում	Պտացում	Բանուկ ընթ.	Արտամղում
Յերկրորդ	Արտամղում	Ներածում	Պտացում	Բանուկ ընթ.
Յերրորդ	Պտացում	Բանուկ ընթ.	Արտամղում	Ներածում
Չորրորդ	Բանուկ ընթ.	Արտամղում	Ներածում	Պտացում

Ներքին այրման շարժիչ է կոչվում այն շար-
ժիչը, վորի մեջ վառելիքի (բենզինի, նավթի) այր-
վելը տեղի յե ունենում գլանների ներսում:



Նկար 2-րդ: Տրակտոր:

Նկար 2: 1) Փոքր որակողովակ, 2) զլանածայրի մաս, 3) զբլխավոր որակողովակ, 4) զլանածայր, 5) շարժուն ձողիկ, 6) խառնման կամերա, 7) զլանածայրի որակ, 8) ռադիատորի վերևի ջրամբար, 9) մաս, 10) լեզվայ, 11) ռադիատորի վերևի միացնող ծունկ, 12) ռադիատոր, 13) որամաքրիչ, 14) կոմուտատորի սանձիկ, 15) որամաքրիչի փոկ 16) լեզվակի զսպանակ, 17) մղիչ, 18) որամաքրիչի շարժիչ անիվ, 19) լարման կոթ, 20) առջևի առանցք, 21) կոմուտատոր, 22) բաշխիչ ատամնավոր անիվներ, 23) բաշխիչ զլանակ, 24) առջևի առանցքի հպիչ (упор), 25) յուղատաշտակ (масляное корыто), 26) յուղախողովակ, 27) ծնկաձև զլանակ, 28) մագնետոյի ճախարակ, 29) մագնիտներ, 30) արձակիչ խցան, 31) շարժիչ ճախարականիվի ատամնավոր անիվ (ведомая шестерня приводного шкива), 32) յուղանոթ (масляной колодезь), 33) արձակիչ խցան, 34) միացման խողովակ (муфта сцепления), 35) մախովիկ, 36) հաղորդիչ զլանակ (передаточный вал), 37) շարժիչ ճախարականիվի առաջմղիչ ատամնավոր անիվ (ведущая шестерня приводного шкива) 38) հաղորդումների պլիտա (плита передач), 39) միացման խողովակի լծակ, 40) միացման խողովակի հանման թաթիկ (кулачек выключения муфты), 41) ղեկամասի սեկտոր, 42) ղեկամասի ատամնավոր անիվ, 43) վերևի և ներքևի հաղորդիչ զլանակներ, 44) ճիճուաձև անիվ (червячное колесо), 45) ճիճուաձև մասնիկ, 46) կցվող ունկ (прицепная скоба), 47) ճիճուաձև մասնիկի հպիչ ատանցքակալ (упорный подшипник червяка), 48) արագույն յունների սուլփ (коробка скоростей), 49) յետևի կամրջի կիսաառանցք (полуось заднего моста), 50) զեֆերենցիալի սատելիտ (сателит дифференциала), 51) զեֆերենցիալի խաչաձև մասնիկ (крестовина), 52) նստելու տեղ, 53) նստելու տեղի դաղանակներ, 54) յետևի անիվի կող, 55) գազի լլծակ (рычажок газа), 56) վառելանյութի անոթ, 57) որամաքրիչի (воздухоочиститель) լողան (поплавок), 58) որամաքրիչ, 59) որակուփի սանձիկ (поводок воздушной заслонки), 60) զրոսելի լեզվակի սանձիկ (поводок дроссельного клапана) 61) փոխի (фильтр), 62) կոմուտատորի սանձիկի կոթ, 63) կարգավորիչ ասեղի կոթ (стержень регулировочной иглы), 64) գործիքների արկղ, 66) ղեկ, 65) արգելակի լծակ (рычаг тормоза):

Շարժվելու համար տրակտորն (տես 2 նրկարը 10 էջում) ունի չորս անիվ, իրենց խթան-

ներով (защит, шпоры): Յետևի անիվները շարժիչի հետ միացված են հաղորդումների միջոցով և, կպչելով հողին, շարժման մեջ են դնում արակտորը:

Տրակտորի հաղորդումները (այսինքն մի մասնիկի շարժման միջոցով մյուսի շարժվելը) կատարում են միացման խողովակը, շարժման արագությունների տուփը, ճիճուաձև մասերն ու դիֆերենցիալը:

Ծնկաձև գլանակի ծայրին գտնվում է մախովիկը: Այդ գլանակի ծայրի դիմաց տեղավորված է հաղորդումների շարժիչ գլանակը: Վերջինիս ծայրին գտնվում է միացման խողովակը: Միացման խողովակի ոգնությամբ կարելի չէ անջատել մոտորը հաղորդումներից և յետևի անիվներից: Միացման խողովակը բաղկացած է 17 բառակ, պողպատյա շրջաններից (սկավառակներից), վորոնց վրա կան փոսիկներ, իսկ մախովիկի վրա կան քառակուսի բևեռիկներ, վորոնք մտնում են այդ փոսիկների մեջ: Վեց ուժեղ զսպանակների միջոցով միացման խողովակի գլանակը միշտ միացված է ծնկաձև գլանակի հետ: Նրանց անջատելու համար է միացման խողովակի վտար (медаль): Միացման խողովակի գլանակը միացված է շարժման արագությունների տուփի հետ, վորը բաղկացած է մի ամբողջ շարք գանազան չափի (շառավիղի) ատամնավոր անիվներից, իսկ սրանց կարելի չէ զանազան կերպ միացնել և սրանից ել ստացվում են արակտորի գանազան արագությունները:

Շարժման արագությունների տուփից ճիճուաձև գլանակի միջոցով շարժումը հաղորդվում է ճիճուա-

ձև անիվին, իսկ սրանից ել, դիֆերենցիալի միջոցով, — յետևի անիվների կիսաառանցքակալին:

Դիֆերենցիալը բաղկացած է խաչաձև մասնիկից, վորը գտնվում է ճիճուաձև անիվի ներսում: Խաչաձև մասնիկի շորս ծայրերին ամրացված են շարժական փոքրիկ կոնաձև ատամնավոր անիվներ (ատետլիտներ), վորոնք իրենց հերթին կցվում են յերկու կոնաձև ատամնավոր անիվների հետ, վորոնք գտնվում են կիսաառանցքների ծայրերին: Խաչաձև մասնիկը պտտվում է ճիճուաձև անիվի հետ միասին: Դրա շնորհիվ յետևի անիվները կարող են պտտվել գանազան արագությամբ (դիֆերենցիալ կերպով), վորն առանձնապես կարևոր է տրակտորը յետ գարձնելու ժամանակ, յերբ յետևի անիվներից մեկը ավելի շատ տարածություն պիտի անցնի, քան մյուսը:

Տրակտորի հաղորդումների ամբողջ սխեմայի գետեղված է ընդհանուր թուղյա կարտերի մեջ:

Հաղորդումների կարտերի վրա տեղ է սարքված տրակտորիստի նստելու համար: Նստերատեղի առաջ գտնվում ղեկանիվը և գազի (գրոսսերի լեզվակը), ոդի, վառելու, ներսրակիչի (жиклер) ասեղի և սեպուլյատորի լծակները, ինչպես նաև արագությունների լծակն ու միացման խողովակի վտար, վորոնց ոգնությամբ տրակտորին տրվում է հարկավոր ուղղությունն և կանոնավորվում է մոտորի աշխատանքը:

Տրակտորի ղեկամասը բաղկացած է ղեկանիվից, սյունյակից, ճիճուաձև մասնիկի ու ատամնավոր անիվի մեխանիզմից և մի շարք ձգող մասնիկներից ու շարնիրներից, վորոնք ղեկանիվի շարժումները հաղորդում են առջևի անիվների ձողերին, վորոնց ոգնու-

Թյամբ տրակտորը դարձվում է ղեպի աջ կամ ղեպի ձախ:

Ղեկանիվից ներքև, առջևի պատի վրա տեղափոխված է գործիքների առկղը, վորի մեջ պահվում են այն բոլոր գործիքները, վորոնք անհրաժեշտ են տրակտորի աշխատելու ժամանակ:

Յետևի անիվները ծածկված են թելերով—տրակտորիստի սպահովության և մեքենան կեղտից պաշտպանելու համար:

Թևերի մեջ կան արկղներ՝ լրացուցիչ գործիքների, պահեստի մասերի ու մեքենան մաքրելու լաթերի տեղավորման համար:

Տրակտորի յետևում գտնվում է կցման ունկը (соеда): Բացառապես սրան են ամրացվում կցվող գործիքները:

Տրակտորը ձախարականիվով շարժման մեջ է դրվում: Ճախարականիվը շարժական է և ամեն ժամանակ կարող է հանվել կամ դրվել, նայած թե այդ հարկավոր է աշխատանքի ժամանակ, թե վոչ: Ճախարականիվի համար կա հատուկ հաղորդում: Ճախարականիվի տրամագիծը 241 միլիմետր է, լայնութունը—165 միլիմետր: Նա կատարում է 1000 շրջան: Ճախարականիվն ունի 20 ձիու ուժ: Փոկի արագութունը հասնում է մեկ րոպեյում 750 մետրի:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Տրակտորն աշխատեցնելու համար հարկավոր է բեկզին, նավթ, յուղ յեվ ջուր:

Այդ բոլորը տրակտորի մեջ լցնելը կոչվում է քալսոթի մատակարարում:

Բենզինը գործ է ածվում միայն տրակտորի մոտորը լարելու, նրան ընթացք տալու և նրա նախնական տաքացման համար: Բենզինը լցվում է իր պնակը տրակտորի աջ կողմից: Ամառը չպետք է լիքը լցնել այդ պնակը, վորովհետև տաքութունից բենզինը սաստիկ լայնանում է և կարող է թափվել:

Նավթը—մշտական աշխատանքի համար է: Նավթը լցվում է 75 կգր. (չորս և կես փութ) հատուկ պնակի մեջ, վորը գտնվում է տրակտորի վերևի մասում: Նավթն ու բենզինը պետք է մաքուր լինեն և լցվեն ցանցավոր սրվակով:

Յուղը բոլոր շփվող մասերի համար է: Տրակտորի գլխավոր շփվող մասերի յուղելը տեղի յե ունենում շարժուն ձողիկների և մախովիկի միջոցով, վորոնք շաղ են տալիս յուղը: Կարտերի ներսում կան տաշտակներ (ակոսներ)—ամեն մի շարժուն ձողիկի տակ: Շարժուն ձողիկների կափարիչների վրա սարքված են բաժակներ: Յերբ շարժուն ձողիկները պտտվում են, նրանք այդ բաժակներով յուղը հանում են կարտերում յեղած տաշտակներից, ուժեղ թափով շաղ են տալիս այն: Այդ շաղ տված յուղով էլ յուղվում են շարժուն ձողիկների առանցքակալները, գլանածայրերն ու գլանների (УШЛНЭДР) պտտերը:

Մախովիկը հատուկ յուղախողովակով (տես նկար 1 և 2) յուղը տալիս է առջևի շարժուն ձողիկներին և յուղում է նրանց: Ատամնավոր անիվներն և հաղորդումների գլանակները պտտվում են յուղի մեջ և այդպիսով յուղվում: Մնացած տեղերը աշխատողներն են յուղում:

Ջուրը նրա համար է, վոր գլանները պաշտպանվեն չափից դուրս տաքանալուց և մաքրվի ու խոնավացվի ողոր, վոր անհրաժեշտ է գլաններում յեղած խառնուրդի այրման համար: Ջուրը լցվում է—

ա) Ռազիատորի մեջ—չորս և կես գուլ (Ջուրը պետք է դուրս թափվի ստորին խողովակից): Ռազիատորը միշտ պետք է լիքը լինի ջրով: Աշխատանքի ժամանակ ջուրը պիտի ավելացնել ամեն մի կամ յերկու ժամից հետո:

բ) Ողամաքրիչի մեջ կես գուլ—լցնել արակտորի ձախ կողմից: Ողամաքրիչի մեջ ջուրը լցվում է յուրաքանչյուր յերկու—յերեք ժամից հետո:

Պետք է գործածել միայն մաքուր ջուր: Ողամաքրիչը պետք է ամեն որ մաքրել կեղտից և լվանալ թուլացնելով ներքևի պտուտակը (խցանը): Ռազիատորի ջուրը թափելու համար բանալ նրա ներքևի, ձախ կողմի ծորակը:

ԻՆՉՊԵՍ ՅՈՒՂԵԼ ՏՐԵԿՏՈՐԸ

«Գործածեցեք միայն լավ և մաքուր յուղ: Նա եժան կնստի և ավելի յերկար կպահի մեքենան»:

Վորպեսզի տրակտորի իրար շփվող մասերը լավ աշխատեն և քիչ մաշվեն, յուղում են: Յուղելու կարգի մասին տես 3 նկարը գրքիս 18-րդ էջում:

1) Շարժիչի կարտերի մեջ լցվում է մոտորային, գլանային (УЛИНДРОВЫЙ) յուղ (ձմեռը—հեղուկ, Ավտոլ M, ամառը—խտացրած, Ավտոլ T): Այդ յուղը լցվում է տրակտորի ձախ և առջևի կողմի անցքից: Լցվում է 20—23 ֆունտ: Պետք է լցնել այնքան, մինչ-

չև վոր յուղը յերևա կարտերի ներքևի ձախ կողմի յուղածորակից (իհարկե յեթե ծորակը բաց է):

Աշխատանքի ժամանակ յուղը պիտի ավելացնել յուրաքանչյուր 5 ժամը մի անգամ:

Յերեք մի լարեք մասոր, յերե յուղը չի գնում ներքևի ծորակից: Յուղը միշտ պետք է լցնել գտիչի (Ֆիլտր) ցանցի միջով: Յուրտ յեղանակին, վորպեսզի յուղն արագությամբ անցնի ցանցի միջից, հարկավոր է այն մի փոքր տաքացնել:

Յուղի քանակն ստուգել և այն լցնել պետք է միայն շարժիչի կանգ առած ժամանակ:


Յեթե որվա վերջում յուղը յերևա վերևի հսկիչ ծորակից, այդ նշանակում է, վոր աշխատանքի ժամանակ խտանում է նավթը, հոսում է կարտերի մեջ և հալեցնում յուղը: Իրանից յուղը կորցնում է իր քավելու հատկությունները:

Շարժիչի կարտերում յեղած ամբողջ յուղն անհրաժեշտ է փոխել 100—120 ժամ աշխատելուց հետո: Իրա համար պետք է բաց անել կարտերի ներքևի խցաններն ու դուրս թափել ամբողջ յուղը: Հետո խցանները փակել: Այնուհետև կարտերի մեջ լրցնել 7 ֆունտ նավթ: Արագությամբ, ձեռքերով պլտտել ծնկաձև գլանակը (բռնելով լարման կոթից), դուրս թափել կեղտոտ նավթը և նոր յուղ լցնել մինչև վերևի ծորակի մակերևույթը:

2) Հաղորդումների կարտերի մեջ, ձախ առաջմղիչ անիվի մոտ յեղած վորկրամասնիկի (ГОРЛОВИНА) միջով լցվում է 30 ֆունտ ծանր, հանքային յուղ («Ավտոլ T») կամ «Վիսկոզին 3»:

Հաղորդումների կարտերի մեջ յուղը պետք է





Նկար 3-րդ: Տրամադրյալ ջուրը կանխիկ կարտերի կարտերի լցնելու անցքը

Նկար 3 1) Մոտորի կարտերի լցնելու անցքը, 2) հաղորդումների կարտերի լցնելու անցքը, 3) ա) — առջևի անիվների խուփերը, բ) շտաուֆերի յուղանոթները, գ) ձեռնի անիվների կիսաառանցքի բարձր, 4) կոմուտատոր, 5) ողամաքրիչ (ВЕНТИЛЯТОР), 6) քարշի և միացման շարնիրները (шарнир):

ավելացնել յուրաքանչյուր 10 ժամ աշխատանքից հետո, վորկրամասնիկի ծայրերի մակերեկվոյթին հավասար: Յուրը պետք է լցնել ցանցապատ սրվակից:

200—240 ժամ աշխատելուց հետո պետք է փոխել նաղորդումների սուփի մեջ յեղած ամրող յուղը: Դրա համար պետք է ռաց անել հաղորդումների կարտերի ներքեում յեղած խցանը, դուրս թափել ամբողջ յուղը, լվանալ նավթով, դուրս թափել կեղտոտ նավթը և լցնել նոր յուղ մինչև վորկրամասնիկի ծայրերի մակերեկվոյթը (30 ֆունտ):

3) Նիս յուղը — սալոսը կամ սիլիկոլը լցվում է —

ա) Առջևի անիվների խուփերի (кашак) մեջ: Լցնել անհրաժեշտ է յուրաքանչյուր 60 ժամ աշխատելուց հետո:

բ) Առջևի կիսաառանցքների, փակիչի և ղեկի թրի մոտ յեղած շտաուֆերի յուղանոթների մեջ (հետագհետե ավելացնելով): Շտաուֆերի յուղանոթների կափարիչներն անհրաժեշտ է ամեն օր շրջել 3—4 անգամ:

գ) Ձեռնի անիվների առանցքների բարձի մեջ լցնելու համար բանալ քառակուսի գլխիկ ունեցող խցանները: Տավոտը լցնել մինչև ծայրերը, — յուրաքանչյուր 30 ժամվա աշխատանքից հետո:

4) Ամեն օր անհրաժեշտ է մեքենայի յուղով յուղել կոմուտատորը (ելեքտրական հոսանքի բաշ-

խիչը): Շաբաթը մեկ անգամ հարկավոր է հանել կոմուտատորը, լվանալ նավթով, լավ սրբել և թեթեփակի յուղել կոմուտատորը և նրա գլանակը (РОЛК):

5) Ոգամաբրիչը (ВЕНТИЛЯТОР) յուղել յուրաքանչյուր 6 ժամ աշխատելուց հետո, լցնելով մեքենայի յուղը (կամ Ավտոլի) նրա պնդանի (ВТУЛКА) մեջ, թուլացնելով պտուտակը:

6) Ռեգուլյատորի մեջ յուղը լցնել շաբաթը մեկ անգամ:

7) Լարելուց առաջ անհրաժեշտ է յուղել լարման կոթը (ПУСКОВАЯ РУКОЯТКА):

8) Անհրաժեշտ է հետևել դեկի ու միացման բարձր պարագանների և առջևի առանցքը միացնող մասերի յուղելուն:


Այս կանոնների ճիշտ պահպանումը կապահովի տրակտորի յերկարամյա աշխատանքը:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կ Ա Ր Բ Յ Ո Ւ Ի Ր Ա Յ Ի Ա

Տրակտորի համար հիմնական վառելիքն է նավթը՝ աշխատեցնելու և բենզինը՝ մոտորը շարժման մեջ դնելու համար:

Բայց տրակտորի գլաններում այրվում է վոչ միայն հեղուկ բենզինը կամ նավթը, այլ և նրանց գոլորչին՝ ողի հետ խառնված: Վառելանյութի (բենզին, նավթ) գոլորչին, փորոշ քանակով խառնվելով ողի հետ, կազմում են մի առանձին, պայթուցիկ, այրփոց բանուկ խառնուրդ (рабочая смесь):



Պատկեր 4-րդ. Տրակտորի վառարկուցի սխեմա

Նկար 4: 1) Միջադիր (прокладка), 2) ողային խողովակի ֆլանեցը (фланец). 3) լողան, 4) ջրի մակարդակը, 5) նավթամուղ, 6) միջադիրներ, 7) անդրադարձ թիթեղ) 8) ողամաքրիչի կափարիչ, 9) ողամաքրիչի իրան, 10) գլխավոր ողային խողովակ, 11) նախնական ողի խողովակ, 12) թաղիքյա ողակներ, 13) ողախուռ (воздушная заслонка), 14) կանոնավորիչ ասխաձև լեզվակ, 15) վառելիքի քամիչ, 16) բենզինի պնակի արձակիչ խցան, 17) գոցվող ծորակ, 18) բենզինի պնակի գտիչ, 19) լողանի կամերայի արձակիչ ծորակ, 20) լողանի կամերա, 21) խողովակ դեպի շոգիացնող մասնիկը (испаритель), 22) տրակտորի տեղափոխման (холостой ход) կանոնավորիչ պտուտակ, 23) դրոսելի արգելակիչ լծակը, 24) կեղտանոթ, 25) լցնելու անցք, 26) խառնման կամերա, 27) ավտոմատ ողատար լեզվակ, 28) շոգիացնող մասնիկի խողովակի ծայրը, 29) դրոսելի (գաղի) խուփ, 30) միջադիր, 31) ռեզուլյատորի ֆլանեց, 32) տաքացնող մասնիկի լծակ, 33) ներածման խողովակներ, 34) արտաթորման խողովակներ, 35) տաքացնող մասնիկ, 36) ժայթքման խողովակ:

Մոտորի համար բանուկ խառնուրդ պատրաստելը, այսինքն հեղուկ վառելիքը զազային զրուծյան վերածելը և նրա հարկավոր քանակի խառնվելն ողի հետ՝ կոչվում է կարբյուրացիա, իսկ այն գործիքը, վորի մեջ կատարվում է այդ պրոցեսը—կարբյուրատոր (տես նկար 4, գրքիս 21-րդ էջում):

Կան կարբյուրատորների մի քանի սխեմաներ.— Կինգստոն № № 1, 2 և 3: Հոլլեյ № № 1, 2, 3: Դրանք բոլորն ել համարյա միատեսակ են գործում և տարբերվում են միայն իրենց մասերի կառուցվածքով:

ԿԱՐԲՅՈՒՐԱՑԻԱՅԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ—

1) Պնակներ վառելանյութի համար—բենզինի և նավթի,—ցանցավոր գտիչով և կեղտամանով, վառելանյութը աղբից մաքրելու համար:

2) Խողովակներ՝ սեղմիչ պտուտակազլխով (v. a. ü-

ка), նավթի ծորակով և փոխացիկ (перекрывной, переходной) ծորակով—վառելանյութի—բենզինի ու նավթի մատուցման համար:

3) Ողամաքրիչ՝ լողանով և ողամղիչներ՝ թաղիքյա ողակներով:

4) Լողանի կամերա՝ լողանով և կոնաձև լեզվակով:

5) Ներսրակիչ—ասեղով:

6) Շոգիացնող ոձաձև մասնիկ:

7) Գաղի խուփ (դրոսսելի լեզվակ):

8) Խառնման կամերա:

10) Ներածող խողովակներ:

Կարբյուրատորի աշխատանքը կատարվում է այսպես.—պնակներից վառելիքն ինքնահոսով անցնում է լողանի կամերան: Այնտեղ նա լողանի շնորհիվ պահվում է վորոշ մակարդակի վրա և ներսրակիչի (жиклер) ասեղը բացվելու դեպքում, սկսում է ներսրակիչի միջոցով վերածվել մանրագույն կաթիլների—գոլորշու, յենթարկվելով ողի ներգործման, վորն ստացվում է նախնական ողի խողովակից,—ինչպես և մթնոլորտի այն նոսրացման, վորն առաջանում է գլաններում, շնորհիվ նրանց մեջ գլանածայրերի ընթացքի: Գլանները ծծում են վառելանյութը (և ողը): Բեզինը գոլորշիանում է ինքն իրեն, առանց տաքացվելու: Դրա համար ել մենք մոտորը լարում ենք բենզինով, իսկ նավթը գոլորշիանալու համար տաքություն է պահանջում: Դրա համար ել լարելուց հետո նավթ ենք բանեցնում մոտորի համար, յերբ

նա բավականաչափ տաքանում է բենզինի այրվելուց:

Այրվող վառելանյութը ներսրսկիչից անցնում է շողիացնող մասնիկի մեջ, դառնում է գոլորշի (բենզինը—ինքն իրեն, նավթը—այրված գազերից առաջացած բարձր տաքության ներգործությամբ) և այդպիսի գազային զրուծյամբ գնում է խառնման կամերան: Ողբ, մաքրված լինելով ջրային գոտիչով, այդ ժամանակ ողամղիչով նույնպես անցնում է խառնման կամերան:


Նառնման կամերայում վառելանյութի (горючего) գոլորշին, խառնվելով վորոշ քանակով ողի հետ (վառելանյութի 1 մասը—16 մաս ողի հետ—ըստ կշռի) առաջացնում են այրվող զանգված, վոր կոչվում է իանուկ խառնուրդ, վորը ներածող խողովակներով (впускная трубка), ներածող լեզվակների միջոցով, Կորոշակի մոմենտներում լցվում է գլանները (առաջին տակա—ներծծում):

Գլանածայրի յերկրորդ ընթացքով (խտացում) բանուկ հառնուրդը գլաններում, լեզվակների վազ լինելու դեպքում, խտանում է (տես նկար 5, 25-րդ էջում):

Պայթյունի համար խառնուրդը կայծով վառելը հնարավոր է միայն նրա սաստիկ խտության դեպքում:

Գլաններում խառնուրդի խտության աստիճանը կոչվում մամլում (компрессия). բանուկ խառնուրդը լինում է՝ նիս, հարուս և աղբաս:

Յերբ այդ խառնուրդը լինում է նիս, այդ դեպքում, աշխատելու ժամանակ, ժայթքման խողովակից ժայթքում են անգույն և առանց անհաճո հոտերի գազեր:



Նկար 5. 1-ին տակա—ներծծում

Նկար 6. 2-րդ տակա—խտացում

Իսկ յերբ ժայթքող գազերի գույնը սև է, կապտավուն, ապա դա հարուս խառնուրդի պարզ նշան է (վառելանյութը շատ է, ողը քիչ):

Յեթե կարբյուրատորում տեղի յեն ունենում աննշան պայթյուններ—կարբյուրատորը «փոշտում է», ապա դա նշանակում է, վոր խառնուրդն աղբաս է (ողը շատ է, խառուրդը քիչ):

Պետք է աշխատել միայն ճիշտ խառնուրդով: Յեթե լինում է հարուստ կամ աղբաս խառնուրդ, տրակտորն սկսում է պակասեցնել իր ուշքը, ուստի

կարբյուրատորի կանոնավորման միջոցով անհրաժեշտ է շատ շուտ վոչնչացնել սխալ խառնուրդը:

Վորպեսզի կարբյուրատորը կանոնավոր աշխատի, անհրաժեշտ է հետևել վառելանյութի մաքրության, վորի համար այդ վառելանյութը պետք է լցնել միայն ցանցավոր սրվակով, մաքրել վառելանյութը տեղափոխող խողովակը և հսկել լողանի կամերայի, ներսրսկիչի և մնացած սխտեմի կանոնավորության վրա:

Տ Ր Ա Վ Տ Ո Ր Ը Վ Ա Ռ Ե Լ Ը

Տրակտորի շարժիչի աշխատանքն առաջ է գալիս այն գազերի լայնացման հետևանքով, վորոնք գտնվում են մոտորի գլաններում:

Գազերը լայնանալով, սեղմում են գլանաձայրերին: Վերջիններս գազերի ճնշման տակ սկսում են շարժվել գլաններում, — վերևից ներքև, ծնկաձև գլանակի (մախովիկով) ոգնությամբ, մի գլանաձայրն ոգնելով մյուսին: Գլանաձայրերի այդ ուղղագիծ շարժումը, ձողիկների ոգնությամբ, հաղորդվում է ծրնկաձև գլանակին (ծուռ ծայրանի մեխանիզմ), վորը գլանաձայրերի այդ ուղղագիծ շարժումը վեր է ածում պտույտի:


Ծնկաձև գլանակի պտտվելը մի ամբողջ շաբբ միացումների միջոցով հաղորդվում է յետևի անիվներին և տրակտորը շարժվելու հնարավորություն է ստանում: Հետևապես տրակտորի աշխատանքում զբլխավոր դերը կատարում է գազերի լայնացումը: Իսկ այդ գազերի լայնացումը հնարավոր է նրանց տա-

քանալու, վայրկենապես այրվելու — պայթման դեպքում:

Տրակտորի գլաններում գազերի վառելը տեղի է ունենում ելքատրական կայծով: Ելքատրական հոսանքը, վորը կայծ է տալիս, մշակվում է հատուկ դինամոյով (մագնետո), վորը գտնվում է տրակտորի իրանում (կորպուս):

Վ Ա Ռ Ե Լ ՈՒ Ս Ի Ս Տ Ե Մ Ի Մ Ե Զ Մ Տ Ն ՈՒ Մ Ե Ն —

- 1) Դինամոն:
- 2) Հոսանքի ընդունարանը (հավաքիչ խողանակը):
- 3) Չորս բորիններ (БОРИНЫ):
- 4) Կոմուտատորը (հոսանքի բաշխիչ) — գլանակով:



Նկար 7: Դինամո (մագնետո): 1) Դեպի բորինները գնացող փաթեթի (ՕՃՄՈՒԿԱ) ծայրը, 2) այդ տեղում փաթեթի ծայրը միացված է տրակտորային զանգվածին, 3) ճախարակի սրտիկը, 4) մագնետոյի ճախարակների պլան-ողը, 5) մախովիկը, 6) մագնիս, 7) ունկ (ՏՐՕԾԱ):

- 5) 4 հատ մոմ:
- 6) Ելեքտրոլարեր:
- 7) Վառելու կոթք:
- 8) Հոսանքի փակիչ (ВЫКЛЮЧАТЕЛЬ):

Դինամոն բաղկացած է հետևյալ մասերից. —

ա) Տասնուվեց պայտածև մագնիս, վորոնք միացվում են մեկը մյուսին և ամրացված են պտտող մախովիկի վրա:


բ) Տասնվեց փաթեթներ յերկաթալարերից: Փաթեթները միանում են փակ ողակում, ամրացված են սկավառակին (Диск), վորն անշարժ պտտատակված է տրակտորի իրանին: Փաթեթի մի ծայրը միացված է տրակտորի մետաղային զանգվածին, իսկ մյուսը գրնում է հոսանքի ընդունարանը՝ բորինների վրա:

Տրակտորի վրա ելեկտրական հոսանքը ստացվում է մագնիսային յեղանակով: Մենք գիտենք, վոր յուրաքանչյուր մագնիսի մոտ կա «մագնիսային դաշտ», այսինքն այնպիսի տարածություն, վորտեղ տեղի յեն ունենում մագնիսականության յերևույթներ: Մագնիսային դաշտը բաղկացած է ույժի դժերի բազմաթիվ ուղղություններից, վորոնցով ներգործում է մագնիսը: Մեզ հայտնի յե, վոր պայտածև (подковообразный) մագնիսը դեպի իրեն է քաշում մեխերն և այլ յերկաթե ու պողպատե առարկաները: Մակայն մագնիսն ունի նաև այնպիսի հատկություն, վոր յեթե մագնիսագաշտում շարժվի մետաղյա ողակը, ապա այդ ողակում առաջանում է ելեքտրական հոսանք: Յեթե վերցնենք յերկար, առանձնացրած յերկաթալարը և նրանից փաթեթ շինենք, անպայման միացնելով յերկաթալարի ծայրերը, — ապա այդպիսի փա-

թեթում, յեթե նրա մոտ պտույտ են գալիս մագնիսները, — կառաջանա գզալի բանակությամբ ելեքտրական հոսանք:

Հենց այդ նույնն ել տեղի յե ունենում տրակտորի դինամոյում, ծնկաձև գլանակի, մախովիկի և ճախարակների (փաթեթների) մոտ յեղած մագնիսների պտույտի ժամանակ:

Բայց տրակտորի դինամոյում արտադրվող հո-



Նկար 8: 1) Մագնիսայի կոնտակտը, 2) Ելեքտրոլար մագնիսայի դեպի բորինները, 3) մագնիսայի գնացող ելեքտրոլարի կոնտակտը, 4) բորինների տուփը, 5) Ելեքտրոլարեր դեպի կոմուտատորը, — ա) կանաչ, բ) կարմիր, գ) սև, դ) ձիթենագույն, 6) կոմուտատորի պարանը 4 ելեքտրոլարերից, 7) կոմուտատոր, 8) Ելեքտրոլարեր դեպի մոմերը, — ա) դեպի № 1-ին մոմը, բ) — № 2-ը, գ) — № 3 և դ) — № 4-ը, 9) հոսանքի փակիչ:

սանքը, վոր կոչվում է ցածր լարվածության (թույլ) հոսանք, չի կարող տալ մի այնպիսի մեծ ելեքտրական կայծ, վորը կարողանա վառել գլանում յեղած խառնուրդը: Ուստի հոսանքը դինամոյից (տես նկար 29-րդ եջում), ընդունարանի (հավաքիչ խողովակի) և ելեքտրոլարի միջով ուղղվում է դեպի չորս բոբիններ ունեցող արկղը (տրակտորի ձախ կողմից). նրանցից յուրաքանչյուրի մեջ ցածր լարվածության հոսանքը «վերամշակվում է բարձր լարվածության հոսանքի, վորը բավական է ուժեղ կայծ տալու համար:

ԲՈՒԲՆՆԵՐԻՅ ՀՈՍԱՆՔԸ ԳՆՈՒՄ Ե ՅԵՐԿՈՒՈՒՂՈՒԹՅԱՄԲ—

- 1) Դեպի կոմուտատորը (հոսանքի բաշխիչը) և
- 2) Դեպի մոմերը:


Դեպի բաշխիչը հոսանքը գնում է չորս ելեքտրոլարերով, վորոնք կապված են ամեն մեկն առանձին (յուրաքանչյուր ելեքտրոլար տարբեր գույն ունի, — ձիթենագույն, սև, կարմիր և կանաչ, վորպեսզի նրանց չչփոթել իրար հետ):

Դեպի մոմերը գնում են չորս ելեկտրոլարեր, վորոնք նրանց հետ միացված են կոնտակտներով (պտուտակային փոքրիկ գլխիկներով): Մոմերը, վորոնք կոչվում են «չեմպիոն», կարելի յե քանդել և նորից ամրագնել:


Կոմուտատորը դեպի մոմերը հոսանքն ուղարկում է խատորեն վորոշված մոմենաներին: Գլանի մեջ կայծն առաջանում է այն ժամանակ, յերբ վերջանում

է յերկրորդ տակար—խտացումը և յերբ կոմուտատորի գլանակը (РОЛИК) հասնում է կոմուտատորում յեղած մետաղյա ցցվածքը (ВЫСТУП): Գագերը պայթում են, լայնանում և ուժեղ կերպով սեղմում գլանածայրերին, ձողիկներին: Առաջ է գալիս յերրորդ տակար—բանուկ ընթացքը: Շարժիչն սկսում է աշխատել (տես նկ. 9-րդ, — սույն եջում):

Չորրորդ տակտի ժամանակ (արտամղում. տես նկ. 10-րդ, ներքևում) այրված, արդեն աշխատած գագերը գլանածայրի ոգնությամբ, (վորը գնում է ներքևից վերև), արտամղիչ լեզվակի և խողովակի միջոցով դուրս են մղվում գլանից: Աշխատած գագերն ոգտագործվում են շոգիացնող մասում (կարբյուրա-



Նկար. 9. 3-րդ տակտ — բանուկ ընթացք:



Նկար 10. 4-րդ տակտ — արտամղում:

տորում) յեղած նավթը տաքացնելու և զօրորչիացնելու համար: Դրանից հետո նորից հետևում են իրար՝ ներծծումը, խտացումը, բանուկ ընթացքն ու արտամղումը—մինչև այն ժամանակ, քանի դեռ աշխատում է մոտորը:

«Փորզոցն և «ՖՊ» տրակտորների մոտորների վառելու և աշխատելու կարգն այսպես է.—1, 2, 4, 3 (այսինքն պայթյունները տեղի յեն ունենում այսպիսի կարգով.—առաջին գլանում, յերկրորդում, չորրորդում և յերրորդում):

* * *

Անհրաժեշտ է միշտ հետևել, վորպեսզի վառելու սխտեմը կանոնավոր աշխատի: Դրա համար աշխատանքից առաջ անհրաժեշտ է այն ղիտել և ստուգել: Վառելու սխտեմի (система зажигания) ստուգումը պիտի սկսել մոմերից, վորոնք պիտի լինեն մաքուր, չունենան մուր և ջարդված ճենապակի, ելեկտրոդների (электрод) միջև տարածությունը լինի կեսից մինչև յերեք քառորդ միլիմետր:

Ստուգելու համար մոմերը պետք է հանել, միացնել ելեկտրոլարերի հետ և դնել գլանի վրա: Լարման կոթով շարժիչը պտտելով, իմանալ, արդյոք կայծ կա՞ մոմերում: Յեթե մի վորեե մոմ կայծ չտա, ապա նրան պիտի մաքրել մրից, լվալ նավթով, յեթե դրանից հետո յել նա չաշխատի, ապա այն տեղ-տեղ փոխել կայծ տվող մոմով, կանոնավորել ելեկտրոդները: Յեթե ուրիշ բոբինով մոմը կայծ տա, ապա դա նշանակում է, վոր առաջին դեպքում բոբինը փչացած էր: Ճաքած ճենապակով մոմը չի աշխա-

տի, վորովհետև հոսանքը չի հասնի ելեկտրոդներին և գլանում կայծ չի լինում: Մոտորը կաշխատի ընդհատումներով, կամ բոլորովին կանգ կառնի: Յեթե մոմի վրա ճենապակին ճաքի, հարկավոր է խկույն փոխել մոմը:

Մոմերից հետո պիտի ստուգել ելեքտրոլարերը և կոնտակտները, վորոնք միանում են բոբիններին: Փչացած լինելու դեպքում սարքել կամ փոխարինել նորերով:

Բոբիններն ստուգելիս պիտի պարզել, թե արդյոք նրանք ամուր դրված են արկղներում, լավ են միացված կոնտակտները, չկա՞ արդյոք նրանց մեջ կեղտ, ջուր, կոնտակտների այրվածք և արդյոք բոբինի ձուճանակի մոտ կա՞ հարկավոր դատարկություն: Դատարկությունն, ինչպես և մոմի վրա, չպիտի լինի կես միլիմետրից պակաս և յերեք քառորդ միլիմետրից ավել: Նրան կանոնավորում են սեղմիչ պտուտակներն ամրացնելով: Մեծ դատարկությունն արագությունը կայրե բոբինների մոտ յեղած կոնտակտները: Կոնտակտների մեջը պետք է մաքրել զմռնիտե (наждачный) թղթով (կամ շատ փոքրիկ քերիչով): Պետք է հետևել, վոր նրանք (կոնտակտները) ճշտությունը լինեն մեկը մյուսի վրա: Չպետք է ժանգոտված ու մրոտված լինի նաև սրտիկը:

Պետք է հետևել կոմուտատորի մաքրության և բավականաչափ լարվածության, ինչպես նաև գլանակի (розетка) զսպանակի կանոնավորության:

Շարժիչի համարյա բոլոր անկանոնությունները տեղի յեն ունենում շնորհիվ մոմերի այրվածքի կամ

թե կոմուտատորի կեղտոտման ու ջարդվածքի, իսկ ավելի սակավ—բորինների անկանոնության: Անկանոնությունները փնտրեցեք մոմերում ու բաշխիչում, հետո միայն բորիններում:

Յեթե բորիններում չկա հոսանք, պետք է հոսանքի ընդունարանը մաքրել ու լվանալ նավթով:

Դինամոյի անկանոնություններն ուղղում է միայն փորձված մեխանիկը:

Միշտ կանոնավոր և մաքուր պահեք վառելու սխտեմը—դա յերաշխավորում է մոտորի լավ աշխատանքը:

Մ Ո Տ Ո Ր Ի Լ Ա Ր Ո Ւ Մ Ը

Նախ քան մոտորի լարումն սկսելը, պետք է նայել, արդյոք ամեն ինչ կանոնավոր է, տրակտորի համար վերցրված է վառելանյութ, յուղանյութ և ջուր և արդյոք վառելանյութը լցվում է կարբյուրատորի մեջ, մոմերը կայծ տալիս են թե վոչ:

Լ Ա Ր Մ Ա Ն Ն Ա Ս Վ Ա Ս Ր Ա Ս Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- 1) Փակել լեռանցքանի (трехходовый) փոքրիկ ծորակը (պոչիկը ներքև):
- 2) Լողանի կամերայից բաց թողնել նավթը, քանալով բաց թողնելու փոքրիկ ծորակը:
- 3) Յեռանցքանի փոքրիկ ծորակին տալ բենզին ընդունելու դիրք (պոչիկը դեպի առաջ):
- 4) Բանալ նավթի պնակի ծորակը:
- 5) Ներսրսկիչի ասեղը բանալ դեպի ձախ, յերկու շրջանով:
- 6) Գազի խուլիը բանալ անցքի մեկ յերրորդի

չափ դեպի ներքև (դեկանիվի մոտ):

7) Մի փոքր բանալ ռեզուլյատորը (կոթը մեկ սանտիմետր դեպի ներքև):

8) Ողախուլիը բոլորովին փակել և հետո քիչ բացել (2 միլիմետրով):

9) Վառելու լծակը (բաշխիչից դեպի վերև, տրակտորի առջևի մասում) դնել հորիզոնական դիրքով, գետնին:

10) Բարձրացնել տաքացնող մասնիկը:

11) Արագությունների լծակին տալ չեզոք դրություն:

12) Յուրա յեղանակին՝ խառնման կամերայում, աջ ու ձախ շարժվող կոճակի տակ լցնել մի քիչ բենզին, ռադիատորի մեջ տաք ջուր լցնել և տաքացնել յուղը:

Մ Ո Տ Ո Ր Ը Պ Ա Տ Ր Ա Ս Ե Ե Ա Ջ Ի Ա Տ Ե Լ Ո Ւ Ա Շ Ն Ա Ս Ս Ն Ք Ի Գ Յ Ե Լ Ը

1) Այ ձեռքով բռնել լարման կոթը այնպես, վորպեսզի բոլոր մատերը լինեն մեկ կողմից*) սեղմել նրան ծնկաձև գլանակի փոքրիկ խրապովիկին և ուժեղ կերպով քաշել այն ներքևից վերև, մի անգամից անելով մի քանի ուժեղ, արագ շրջան: Մոտորը պետք է բռնկվի և աշխատի: Յեթե մոտորը չի լարվում, այդ պիտի կատարել մի քանի անգամ,— մոտորը կբռնկվի և կսկսի աշխատել:

2) Ավելացնել ողը:

3) Պակասեցնել գազը—գազի խուլիի լծակը տանելով համարյա բոլորովին վեր:

*) Այդ արվում է նրա համար, վորպեսզի վաղաժամ բռնկման հետևանքով լարման կոթը յետ խփելիս չհարվածի տրակտորիտի ձեռքին:

4) Ինքուլյատորի լծակը փակել, բարձրացնելով այն դեպի վեր:

5) Բենզոլինով աշխատել մեկից մինչև հինգ ընդ (հայած տարվա յեղանակին):

6) Յեռանցքանի փոքրիկ ծորակը տանել նավթի ծորակի վրա (պոչիկը դեպի յետ):

7) Մոտոզեղ կարբյուրատորի կանոնավորութունը: Մոտորը պետք է արձակե համահավասար, հատու ձայն և ծուխ չհանե: Ընդհատումներ չպիտի լսվեն:

8) Շարժիչի հինգ—տասն ընդ աշխատելուց հետո տաքացնող մասնիկի լծակն իջեցնել:

ԿԱՐԲՅՈՒՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

1) Դանդաղությամբ փաթաթել ներսակիչի ասեղը, հասցնելով մինչև մեկ ու կես շրջանի և շարժել ողի խուփը, հետևելով արտաթորվող գազերի տեսքին ու ու ձայնին: Վորքան փաթաթվի ասեղը և կանոնավորվի, ծուխը կպակասի և հետո բոլորովին կչքանա: Ձայնը կլինի հատու, մետաղի ձայնի նման:

2) Դանդաղ կերպով պակասեցնել գազը, շարժելով գազային խուփը և հետևելով արտաթորման տեսքին ու ձայնին:

3) Յեթե մոտորը ծուխ չի տալիս, արձակում է համաչափ և ութմիկ ձայն, — կանոնավորումը վերջացել է:

Շարժիչին փորձի համար աշխատեցնել մի քանի ընդ և ապա կարելի յե սկսել տրակտորի աշխատանքը:

ՏՐԱԿՏՈՐԻ ԱՋԻՍՏԱՆՔԸ

Յերբ մոտորն աշխատում է կանոնավոր, համաչափ, կարելի յե սկսել գործը— կառավարել տրակտորը, քարշել նրան կցված մեքենաները, — գութանները, ցանիչները: Աշխատել ճախարականիվով— պտտեցնել կայսիչը, աղորիքի քարը, սղոցարանի մեքենաները, ելեքտրոմոտորը:

Տրակտորն ունի ընթացքի յերեք արագութուն և կարող է դեպի յետ գնալ:

Առաջին արագութուն— դանդաղ, մեկ ժամում 2,5 կիլոմետր:

Յերկրորդ արագութուն— բանուկ— 1 ժամում 4,5 կիլոմետր:

Յերրորդ արագութուն— արագ, 1 ժամում 11,2 կիլոմետր:

Դեպի յետ— 1 ժամում 4,3 կիլոմետր:

Հարկավոր արագութունը վերցնում են արագութունների լծակի միջոցով, վորը գտնվում է տրակտորի աջ կողմի յետևի մասում, տրակտորիստի նստելատեղի մոտ:

Լծակը դրվում է—

1-ին արագության համար դեպի ձախ, հառաջ,

2-րդ արագության համար— դեպի ձախ, յետ,

3-րդ արագության համար— դեպի աջ, հառաջ,

Դեպի յետ գնալու համար— դեպի աջ, յետ:

Այս կամ այն արագութունը վերցնելու կամ գազարեցնելու համար անհրաժեշտ է—

1) Սեղմել վորը (և պահել սեղմած),

2) Արագութունների լծակի միջոցով տալ այս

կամ այն ընթացքը—արագությունը (1-ին, 2-րդ, 3-րդ և զեպի յետ):

3) Վառելը մի փոքր առաջ կատարել, ավելացնել գազը և քիչ ծածկել ողախուփը:

4) Աստիճանաբար, սահուն կերպով և դանդաղ թողնել վոտը:

ՏՐԱԿՏՈՐԸ ԿԵՐԹԱՆ

5) Այդ ժամանակ նրան պիտի տալ գազերի ուղի և առաջացման ույժի պահանջված քանակություն (ավելի, քան թե դատարկ ընթացքի ժամանակ), նայած տրակտորի բեռնվածության (շատ կամ քիչ) և տրակտորը կաշխատի ու կգնա նորմալ կերպով:

Յեթե տրակտորին ամրացված է ճախարակահանիվ, ապա շարժիչի աշխատելու ժամանակ, վոտի սեղմած չլինելու դեպքում, այդ ճախարակահանիվը շարունակ պտտվում է:

Յերբ ստացիոնար աշխատանքի ժամանակ (տեղում) ճախարակահանիվի վրա յեք դրել հաղորդիչ փոկը—դանդաղ թողեք վոտը, ինչպես և տեղից շարժվելու ժամանակ: Արագությունների լծակը պիտի լինի չեզոք դրությամբ (нейтральное положение): Ճախարակահանիվը կսկսի աշխատել և փոկի միջոցով կը պտտեցնի հաղորդիչ մեքենան (приводная машина): Ճախարակահանիվը մեկ բոպելում կատարում է 1000 շրջան:

Ճախարակահանիվը կանգնեցնելու (выключение) համար սեղմեցեք վոտը:

Փլանածայրերն ու հաղորդումների գլանակները չջարդելու համար պետք է՝

1) Արագությունները դադարեցնել միայն վոտը սեղմած լինելու դեպքում:

2) Վոտը (կցման միավորիչ խողովակ) սեղմել դանդաղ, սահուն և վոչ թե մի անգամից:

3) Ընթացքի ժամանակ չանցնել 1-ից 2-րդ և 2-րդից 3-րդ արագություններին:

Ընթացող տրակտորը կանգնեցնելու համար պետք է—

1) Պակասեցնել գազի մատակարարումն ու առաջացումը (опережение):

2) Սեղմել վոտը:

ՏՐԱԿՏՈՐԸ ԿԱՆԿ ԿԱՌՆԻ

3) Կանգնեցնել արագությունը, արագությունների լծակին տալով չեզոք դիրք:

4) Ազատել վոտը (педаль):

Արագությունները փոխելու համար անհրաժեշտ է կանգնեցնել տրակտորը, հետո, վերև ասված կանոնների համաձայն, վերցնել մյուս, հարկավոր արագությունը:

Տրակտորը կանգ առնելով, մոտորը շարունակում է աշխատել:

Վորպեսզի կազմեցնել մոտորը, պետք է—

1) Փակել ներսրսիչի ասեղը: Մոտորը մի քիչ կաշխատի և կանգ կառնի:

2) Փակել յեռանցքանի ծորակը, կամ նավթի պնակի մոտ յեղած՝ վառելանյութի ծորակը: Մոտորը կաշխատի մի վորոշ ժամանակ—մեկ-յերկու բոպե—և կանգ կառնի:

Մոտորը կանգ առնելուց հետո կարելուբատորից (լողանի կամերայից) պետք է դուրս թողնել վառելանյութի մնացորդը, բանալով արձակիչ ծորակը:

Ձմեռն անհապաղ, յեթե տրակտորն խսկույն և յեթ չշարունակի աշխատել, — ուղիատորից և ողամաքրիչից դուրս թափել ջուրը (բանալով նրա ներքևի արձակիչ խցանը), վորպեսզի սառած ջուրը չըպայթեցնի նրանց:

* * *

1) Աշխատանքի ժամանակ յերբեք մի ծանրաբեռնի տրակտորը:

2) Սարից իջնելիս վերցրու ամենափոքր արագություն (2-րդ կամ 1-ին) և վառելանյութի ու ուղի քչացումով արգելակիր տրակտորը (աշխատել փոքր շրջաններով (оборот):

3) Սարն ի վեր բարձրանալիս նույնպես պետք է վերցնել ամենափոքր արագություն, բայց ավելի գազ տալ:

4) 3-րդ արագությամբ զգուշ ոգտվիր, վորովհետև տրակտորը մի մեքենա չէ, վորը հարմարեցված է ծանր աշխատանքի և վոչ թե արագ քշելու համար:

5) Առանձնապես պիտի հետևել արմատավոր և ձողիկի առանցքակալներին և ամենախնային թխկոցի դեպքում ձգել առանցքակալները:

6) Շարունակ և ուշադրությամբ հետևել սառեցման սխառեմին ու յուղելուն:

* * *

Տրակտորների լիակատար և նպատակահարմար ոգտագործումը հնարավոր է միայն նորմալ կոլեկտիվ տնտեսութուններում, վորտեղ հողի և աշխատանքի համայնացման ձևերն առավել բարձր են:


Տրակտորների գործադրության վրա բացասա-

բար են անդրադառնում սակավահող տարածությունն ու հողերի կտրվածությունը (чересполосица), վորի շնորհիվ տրակտորն ունի շատ փոքր տոկոս բեռնվածություն և, ընդհակառակը, պարապ ընթացքի մեծ տոկոս, վորի ժամանակ մեքենան մաշվում է ապարդյուն, անոգուտ ծախսվում է վառելանյութը, ժամանակը ծախսվում է վոչ արտադրողաբար: Սա ապացուցում է, վոր տրակտորն ոգտավետ է (իր ծախսերը հանում է, ոգուտ է տալիս) միայն այնպիսի տնտեսություններում, վորտեղ հողերը միացված և վերացված են արտերի սահմանները: Տրակտորների ոգտագործումը գլխավորապես պետք է նպատակահարմար համարվի հողաշինարարությունն անցկացրած ընկերություններում, կոլխոզում, սովխոզում և համատարած կոլեկտիվացման ռայոններում: «ԹՊԿԱ-յին» տնտեսություններում տրակտորն անգործադրելի չէ: ԽՍՀՄ գյուղատնտեսության տրակտորացումը գնում է մեծ տրակտորային կալոնաների, մեքենատրակտորային կայանների (ՄՏԿ) ստեղծման ուղղությամբ, վորոնք սպասարկում են մի քանի գյուղերի և վորոնք պիտի սպասարկեն գյուղատնտեսության բոլոր պրոցեսները:

Այս տնտեսական տարում ԽՍՀՄ-ում ստեղծվում են մինչև 200 մեքենատրակտորային կայաններ, ամեն մեկում 250 տրակտոր: Հյուսիսային կովկասում կկազմակերպվեն 19 այգպիսի կայաններ:

Ս Ա Ռ Ե Ց Ո Ւ Մ

Աշխատանքի ժամանակ մոտորի գլանները տաքանում են. անհրաժեշտ է նրանց սառեցնել: Սառեցումը կատարվում է ջրով:



Նկար 11-րդ. Սառեցման անբեմոխֆոնային սխեմա

Նկար 11: 1) Պոտտոսկ զեպի ռադիատորի կախարիչը, 2) ռադիատորի կախարիչը, 3) կանխման խողովակ (предохранительная трубка), 4) վերին ջրամբարը, 5) ռադիատորի վերին միացուցիչ ծունկը, 6) ռադիատորի շրջանակը, 7) ռադիատորի միջուկը (сердцевина радиатора), 8) ողամաքրիչ, 9) ներքին ջրամբար, 10) ռադիատորի արձակիչ ծորակը, 11) գլանների գլխիկը, 12) գլանների բլուկը: Սլաքները ցույց են տալիս, թե ինչպես է դնում ջուրը:

ՍԱՌԵՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԻՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ—

1) Ռադիատորը, 2) սառեցնող շապիկը, 3) ողամաքրիչը փոկի հետ:

Ջուրը լցվում է ռադիատորի վերին ջրամբարը, անցնում գլանների վրայի սառեցնող շապիկը՝ տաքանում է և, թեթևացած, մտնում ռադիատորի վերին մասը: Իր ծանրության տակ նա ռադիատորի միջուկով հոսում է ներքև, իսկ ողամաքրիչը ողի ու ժեղ հոսանք է մղում միջուկով: Ջուրը սառչում է և նորից անցնում գլանների վրայի շապիկի մեջ: Ջուրն այսպես շարժվում է շարժիչի աշխատանքի ամբողջ ժամանակ:

Սառեցնումն առավել լավ է լինում այն ժամանակ, յերբ ջուրը հասնում է 90—95 աստիճան տաքության ըստ Ցելսիուսի: Աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է թույլ չտալ վոր ջուրը յեռա (100 աստիճան), այլ շարունակ պիտի լցնել սաստիկ տաքացած շարժիչի մեջ, վորպեսզի գլանների բլուկում ձեղքեր չգոյանան: Յեթե մոտորը սաստիկ տաքացել է, անհրաժեշտ է այն կանգնեցնել, թողնել վոր սառի և հետո միայն սառը ջուր ավերացնել:

Ողամաքրիչը տալիս է մինչև 1,800—2000 շրջան մեկ րոպեյում: Անհրաժեշտ է հետևել, վոր չփաստված

և բալականաչափ ձգված լինի ողամաքրիչի փոկը, ձգելով այն եկսցենտրիկ առանցքով:

Յեթե ռադիատորից սկսում ե ջուր կաթել, պետք է իսկույն և յեթ վերանորոգել, հակառակ դեպքում մոտորը կվնասվի:

Աշնանն ու ձմռանը, ցուրտ ժամանակ, հենց վոր աշխատանքն ավարտեցիր, անհրաժեշտ ե ջուրը դուրս թափել ռադիատորից, իսկ սաստիկ սառնամանիքներին աշխատելիս (մինչև 22 սաստիճան) ոգտվել հետեյալ խառնուրդից.— 70 տոկոս ջուր, 30 տոկ. սպիրտ, լցնելով այդ խառնուրդը ռադիատորի մեջ: Վորովհետև սպիրտը ջրից ավելի արագ ե գոլորշիանում, նրան պետք ե շուտ-շուտ ավելացնել:

Սառնամանիքի ժամանակ ռադիատորը պետք ե ծածկել տաք վերմակով:

Ողամաքրիչի մեջ ձմեռը ջուր չլցնել:

Յեթե փոշի չկա և ողը մաքուր ե, ապա պետք ե բոլորովին հանել ողամաքրիչի լողանը և կարելի յե աշխատել առանց ջրի:

Իսկ յեթե փոշի չկա, ապա հանել ողամաքրիչի կափարիչը, լողանի բաժակի անցքի մեջ անցկացնել ծոված մետաղալարի մի կտոր, վորպեսզի նա կախված դրությամբ պահի լողանը և ողամաքրիչի կափարիչն ու լողանը դնել իրենց տեղը: Իրանից հետո տրակտորը կարելի յե բանեցնել առանց ջրի. այս դեպքում ողը, շեշտակի փոխելով իր շարժման ուղությունը, կմաքրվի փոշուց:

ՏՐԱԿՏՈՐԻ ԱՂԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերկարատև աշխատանքի դեպքում տրակտորի մասերի կեղտոտվելուց, մրակալելուց, կամ մաշվելուց առաջ են գալիս զանազան անկանոնություններ նրա աշխատանքում:

Տրակտորիստը շարժիչի տեսանելի առանձնահատկությունների հիման վրա պետք ե արագությամբ գտնի անկանոնությունների պատճառը և նույնպես արագությամբ վերացնի այդ անկանոնությունները:

Ա.Չ.Ս. Ի.Ն.Չ Ա.Ն.Կ.Ա.Ն.ՈՆ.ՈՒԹ.ՅՈՒՆՆԵՐ ԵՆ Լ.Ի.Ն.ՈՒՄ.—

- ա) Շարժիչը չի լարվում, յեթե—
 - 1) Սխալ ե պատրաստվել գործի գցելու համար:
 - 2) Յեթե վառելիքը տեղ չի հասնում—աղտեղված ե խողովակը, փակվել ե ծորակը:
 - 3) Բոլոր կամ մի քանի մոմերում չկա կայծ (յեթե բորինների կամ մոմերի կոնտակտները կեղտոտ են կամ չեն կանոնավորված, կոմուտատորը կեղտոտ ե կամ մաշվել ե քսվելուց, կամ ջարդվել ե նրա գլանակի (РОЛИК) զսպանակը):
 - 4) Լողանի կամերան անկանոն ե:
 - 5) Վատ խտացում (сжатие), այսինքն յերբ լեզվակներն անց են կացնում այրվող խառնուրդը, կամ թե մոմերը վատ են պտուտակված:
 - 6) Ելեկտրոլարերը (провод) սխալ են միացված մոմերի հետ:
 - 7) Մոտորը շատ վառելանյութ ե ծծել:
 - 8) Հոսանքի ընդունարանը կեղտոտ ե:
 - 9) Շարժիչը շատ սառն ե (աշնանը, ձմռանը):

բ) Շարժիչը կանգ է առնում, յեթե—

1) Մեծ բեռնվածության դեպքում (այսինքն յերբ տրակտորը շատ ծանրություն է քաշում—թարգմ.) քիչ գազ է տրված:

2) Ներսրակիչի մեջ կեղտ է ընկել:

3) Վառելանյութ չկա:

4) Վառելանյութի մատակարարման խողովակում աղբ կա:

5) Կայծ չկա (ելեկտրոլարը թուլացել է, մոմերը կեղտոտվել են, կոմուտատորը կեղտոտ է, բոբիններն անկանոն են:

6) Կարբյուրատորը կորցրել է իր կանոնավոր գրությունը:

7) Ուղամաքրիչի մեջ ջուր չկա:

8) Շարժիչը շատ է տաքացել:

9) Չարդվել է ծնկաձև կամ քաշխիչ գլանակը:

գ) Մոտորն ընդհատումներով է աշխատում, յեթե—

1) Վոչ բոլոր մոմերն են աշխատում:

2) Կեղտոտ կամ մաշված է հոսանքի բաշխիչը:

3) Վատ են կանոնավորված կամ մաշված են բորինների մոտ յեղած կոնտակտները:

4) Փչացել է մոմերի կամ ելեկտրոլարի վրայի չեզոքացումը (ճեղհապակին ճեղքվել է):

5) Շարժիչն աշխատում է ողախուփը փակ լինելու դեպքում:

6) Անմաքուր վառելանյութ (աղբ, ջուր):

դ) Շարժիչի մեջ թխկոց լինում է—

1) Արմատավոր կամ ձողիկի առանցքակալների մաշվածությունից:

2) Գլանածայրերում մատի որորվելուց:

3) Խտացման կամերայում յեղած մրից:

4) Մոտորի չափից դուրս աշխատելուց:

5) Չափազանց շատ վառելուց և—

6) Մղիչի և կեզվակի միջև մեծ տարածությունից:

լե) Տրակտորի ուժը թուլանում է, յեթե—

1) Լեզվակներն ամուր չեն ծածկվում:

2) Գլանածայրերի ողակները մաշվել կամ այրվածքներ են ստացել:

3) Հարուստ կամ աղքատ խառնուրդ է գործածվում:

զ) Հաղորդումների անկանոնություններ

1) Արագությունների լծակը դժվար է տեղափոխել, շնորհիվ սկավառակների ((ԱՊՏԿ) մաշվածության:

2) Շարժիչը վոռնոցի ձայն է հանում, յեթե բաշխիչ ատամնավոր անիվները կարգի չեն գցված:

Շատ անկանոնություններից կարելի չէ խուսափել, յեթե նախ քան աշխատանքն ուղադրությամբ դիտել մեքենան, սեղմել բոլոր պտուտակները, բոլորներն ու ելեքտրոլարերը, ստուգել մասերի կանոնավորությունը, մաքրել և ստուգել վառելանյութի ու վառելու սխտեմը, ճիշտ մատակարարել տրակտորին հարկավոր նյութերը և պահպանել այն կանոնները, վորոնց համաձայն պետք է խնամել և բանեցնել տրակտորը:

Գ Ո Ր Ժ Ի Ք Ն Ե Ր

Տրակտորը քանդելու և կապելու, անկանոնությունները վերացնելու համար կան հետևյալ գործիքները.

1) Շարժական բանալի, 2) մոմերի բանալի (յերկկողմանի—մոմերի և կարտերի համար), 3) կոճղուղի բանալի, (ТОРЦОВЫЙ КЛЮЧ), 4) փոքր բանալի (սեղմիչ պտուտակազուլեխների, վառելանյութի խողովակների և ռադիատորի պտուտակազուլեխների համար), 5) կափարիչի բանալի, 6) տափակածայր ունեւիք (ПЛОСКОГОУБЫЙ), 7) յետևի անիվների պտուտակների բանալի և կոթ (УДЛИНИТЕЛЬ) իր կեռով, 8) պտուտակահան (ОТВЕРТКА), 9) շփիչ (ПРИТВЕРКА) լծակների համար և 10) փոքր քերիչ (НАШИЛЬНИК):

Վառելանյութը և յուղը լցնելու համար անհրաժեշտ է նաև ունենալ սրակիչներ (Лейка):

ԸՆԹԱՑԻԿ ԽՆԱՄՔ

Աշխատանքի ժամանակ տրակտորիսար կատարում է հետևյալ ընթացիկ խնամքը.—

- 1) Սրբում է լեզվակները:
- 2) Չզուլում է առանցքակալները:
- 3) Ռադիատորը մաքրում է ջրի յեփվելուց նրստած քափից:

1. Լեզվակները սրբվում են սեղոնի ընթացքում մեկ-յերկու անգամ, նայած նրանց վրա հավաքված մրին: Մրոտված լեզվակները ամուր չեն ծածկում գլանները, մամլումը (компрессия) թուլանում է և մոտորն սկսում է անկանոն աշխատել: Հենց այս բանը վերացնելու համար ել պետք է սրբել լեզվակները:

Վորպեսզի սրբել լեզվակները, հանում են նավթի պնակը, գլանների գլխիկը միջադիրի (прокладка) հետ, թիթեղը, վորը ծածկում է լեզվակների գապանակները, իսկ դրանից առաջ ջուրը դուրս են

թափում ռադիատորից: Գլանների բլոկն ու գլխիկը մաքրում են մրից: Լեզվակները հանվում են իրենց բներից ու գապանակներից: Մանրացրած, փշրված ապակուց և յուղից (Ավտոլ) պատրաստվում է սրբելու թանձր խառնուրդը: Լեզվակը և բները յուղվում են այդ խառնուրդով: Լեզվակի տակ ազատ կերպով զրվում է մի վորե պարուրածն գապանակ (վոչ այն, վորի հետ աշխատում է լեզվակը): Լեզվակի գլխի անցքում զրվում է պողպատե մաքրիչը և լեզվակը պատվելով քսվում է իր բնին: Սրբել պետք է այնքան, մինչև վոր լեզվակի լանջերը ամուր կպչեն բույնի լանջերին: Լեզվակի և բույնի լանջերը պետք է ունենան փայլուն մակարդակ: Յուրաքանչյուր լեզվակ սրբվում է բացառապես դեպի իր բույնը: Յերբ լեզվակները սրբված են, նրանց լվանում են նավթով, յուղում, դնում իրենց բույների մեջ և ամրացնում գապանակով և միջադիրներով (ВСТАВОЧКА): Վերջապես, զգուշութամբ դնում են գլանների գլխիկն իր տեղը, աշխատելով, վոր լեզվակները չջարդվեն:

2) Առանցքակալների շարժուն ձողիկի պրկումը (ПОДТЯЖКА) կատարվում է մոտավորապես 120 ժամ աշխատելուց հետո, յերբ տրակտորն աշխատել է լրբիվ բեռնվածութամբ: Սրմատավոր առանցքակալները պրկվում են սեղոնում 2-3 անգամ: Աշխատելուց առանցքակալների վրայի բաբիտը (баббит) մաշվում է. առանցքակալն ունի բոշ մաս, վորն որորվում է ծնկածն գլանակի վրա, իսկ սրանից թիկոց է առաջանում մոտորի մեջ:

Վորպեսզի ձգել առանցքակալները, պետք է կարտերից դուրս թափել յուղը, հանել այն, հերթով

ամրացնել առանցքակալները, բոլտերից հանել պլատուտակները և վերցնել առանցքակալի ըստորին մասը: Առանցքակալը սրբվում է նավթով, յուղվում և ամրացվում ծնկաձև գլանակին: Ամրացնել պետք է այնքան պինդ, վորպեսզի առանցքակալի բոշ տեղը չընկնի գլանակի վրա, բայց հեշտությամբ պտտվի: Սա լինում է յերկու բարակ արույրի (латунный) միջադիրներից մեկը հանելու միջոցով: Այնուհետև առանցքակալը ձգվում է բոլտերով ու պլատուտակագլուխներով, ամրացվում հատուկ շուկիներով (шпатель): Կարտերը զրվում է իր տեղը և յուղ է լցվում: Մոտորը կարող է շարունակել աշխատանքը: Իսկ յերբ բոլոր միջադիրները զբաղված են և այլևս չի կարելի առանցքակալները ձգել, ապա նրա վրա պետք է լցնել բաբիտի մի նոր շերտ և քերել անհարթութունները (пришавривать):

Առանցքակալների պրկման և նրանց վրա բաբիտ լցնելու աշխատանքը առանձնապես լուրջ է, պահանջում է մեքենայի հետ հիմնական ծանոթություն և փորձառութուն: Առանցքակալներին բաբիտ լցնելն ու նրանց անհարթութունները քերելը ավելի լավ է կատարել փորձված փականագործ—մեխանիկի նսկողությամբ, քանի վոր հաճախ զրանից է կախված մեքենայի կանոնավորութունը:

3) Ռադիատորը քափից մաքրվում է նրա համար, վոր սառեցման սխտեմում շարժվող ջուրը ռադիատորի խողովակների պատերին և սառեցման շապիկի ներքին պատերին թողնում է կրի հաստ շերտ, վորը խանգարում է սառեցման և մոտորը հաճախ չափից շուրս տաքանում է:

Սառեցման սխտեմը քափից կարելի է մաքրել հետևյալ յեղանակներով.—

1-ին յեղանակ.—Քափը վոչնչացվում է 820 գրամ սոդայի (կամ թունդ նատրի), 12 լիտր ջրի և $1\frac{1}{3}$ շիշ նավթի խառնուրդով: Այս խառնուրդը լցվում է սառեցման ամբողջ սխտեմի մեջ և մնում է 24 ժամ, վորից հետո տրակտորը պիտի լարել, վորպեսզի նա 20 ըոպե աշխատի: Ապա պետք է գուրս թափել խառնուրդը (смыть), ռադիատորի մեջ մաքուր ջուր լցնել, լարել մոտորը, աշխատեցնել 15 ըոպե և նորից գուրս թափել ջուրը: Սառեցման սխտեմը մաքրված կլինի:

2-րդ յեղանակ.—Ռադիատորի մեջ լցնել 7 մաս ջրի և 1 մաս աղաթթվուտի լուծվածք և պահել 1 ու կես օր: Իրանից հետո սառեցման սխտեմը լվացվում է մաքուր ջրով—քափը վոչնչանում է:

Այսպիսի յեղանակներով տրակտորը պիտի մաքրել տարեկան 1-2 անգամ:

* * *

Տրակտորների վերանորոգումները կատարվում են հատկապես կահավորված արհեստանոցներում:

ԻՆՉ ԱՂԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ Ե ԿՍՏԱՐԵԼ ՏՐԱԿՏՈՐԸ

Տրակտորը, բացի դաշտում աշխատելուց, միանգամայն հաջող կատարում է և շարժում առաջանելու գործը, վորպես մոտոր: Կալսիչը, ծղնոտահատը, յուղահանը—սրանք բոլորը կարող են հաջողությամբ աշխատել տրակտորի ուժով: Բոլոր աշխա-

տանքները հետո միանգամայն բավարար ժամանակ կմնա նրա համար, վորպեսզի կատարել շարժիչի միջոցով այն բոլոր աշխատանքները, վորոնց կարիքը կզգացվի կոլխոզում:

Գյուղատնտեսության մեջ ի՞նչ աշխատանքներ կարող ե կատարել Փորզոն կամ ՖՊ տրակտորը:

Նա կարող ե վարել յերկու կորպուսանի տրակտորային գուժանով: Յուրաքանչյուր կորպուսը հողը վարում ե 350 միլիմետր լայնությամբ: Այդպիսով որական կարելի յե վարել 2—2 և յերեք քառորդ հեկտար հող:

Տրակտորին կարելի յե կցել սովորական՝ ձիու գուժաններ, որինակ, յերկու հատ յերկկորպուսանի այգպիտի գուժան: Հարկավոր ե միայն, վոր գուժանները լինեն բարձրացնող լծակներով, վորպեսզի հնարավոր լինի հեշտությամբ դարձնել գուժանը:

Տրակտորին կարելի յե կցել նաև բուկկերներ— 2 հատ չորսխոփանի, վորոնցից յուրաքանչյուրը 710 միլիմետր հող կարող ե վարել: Սրանց կորպուսներն ևս բարձրացող պիտի լինեն: Տրակտորը բուկկերներով կարող ե հաջողությամբ կատարել գարնանային կրկնավար և այլ աշխատանք:

Փորզոն տրակտորը կարող ե աշխատել կրկնակի դիսկավոր տափանով, տափանելով 180-250 սանտիմետր լայնությամբ (24-32 դիսկավոր) և յերկու 11-12 շարքանի ցանիչներով և կամ տրակտորային հատուկ 20-24 շարքանի ցանիչով: Թե գուժաններին և թե դիսկերին կարելի յե կցել հասարակ տափաններ:

Տրակտորը լավ ե աշխատում կուլտիվատորներով:

Կան բերքահավաքման հատուկ մեքենաներ, վորոնք քարշվում են տրակտորով և վերցնում 250 և նույնիսկ 300 սանտիմետր: Բայց տրակտորի ոգնությամբ հաջող կարելի յե աշխատել նաև սովորական՝ ձիու խոտահնձիչներով, հնձիչներով և եուրձկապերով: Ավելի լավ ե սրանք կցել զույգ-զույգ, մանավանդ խոտահնձիչները: Մի հնձիչ շատ թեթև ե տրակտորի համար:

Փորզոնն աշխատում ե 5-6 ուժանոց բարդ կալսիչով:

Նա լավ ե քաշում նաև բեռնված սայլերը: Փոքր գառիվերներ ունեցող հողուղիներով (грунтовая дорога) նա հեշտությամբ կքարշե յերեք տոնն բեռով սայլեր:

Տրակտորի շարժիչ ուժով կարելի յե աշխատեցնել ամեն տեսակ մեքենա, վոր 20 ձիու ուժից ավելի չի պահանջում:

Փորզոն տրակտորը կատարում ե նույնպիսի աշխատանք, ինչ վոր 10-12 ձին: Նա կարող ե բոլոր աշխատանքները կատարել 100 հեկտար տարածության վրա, նայած թե ինչ ցանքաշրջան ե ընդունված: Յերկհերթ աշխատանքի դեպքում մեկ Փորզոնը կարող ե սպասարկել 150 հեկտարի:

Այսպիսով ամեն մեկի համար պարզ ե, թե անտեսության մեջ վորքան բազմակողմանի կերպով կարելի յե ոգտադործել տրակտորը և բոլոր աշխա-

տանքները կատարել լավ, իր ժամանակին և ձիով
կատարվող աշխատանքներից վոչ թե թանգ, այլ
ավելի եժան:

Ճորդոն սրակտրի արտադրականության մո-
սավոր ալուսակր. նավթի ու յուղի ծախսուսը

Ի՞նչ աշխա- տանք է կա- տարվում	Արտադրողականությունը 10-ժամյա բանվորական որում	1 հեկտարի վրա յեղած ծախսը*)	
		Ն ա Վ Թ	Յ ու Ղ
Վար	1 ² / ₃ հեկտ.	23-30 կգ.	1 ¹ / ₃ -2 ² / ₃ կգ.
Տափանում	5 ¹ / ₂ »	7 ¹ / ₃ -9 »	10 ⁰ / ₀ նավթ
Յանք	6 ¹ / ₂ »	7 ¹ / ₃ - »	10 ⁰ / ₀ » »
Պտանձունձ	5 »	5 ¹ / ₂ -7 ¹ / ₃ »	» » »
Բերքահավաքը	» »	» » »	» » »
խորձկազներով	5 »	7 ¹ / ₃ -13 »	11 » »
Ցաքանում	7 ² / ₃ »	7 ¹ / ₃ »	» » »
կալս	8 »	» »	» » »
Փոխադրում	1 ¹ / ₂ »	» »	» » »

*) Տրակտորային տնտեսությունների մասսայական հետազոտու-
թյան ժամանակ հավաքված նյութերից:

Բ Ո Վ Ա Ս Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Նախաբան (1): Ընդհանուր ծանոթություն տրակտորի մասին (4): Մա-
տակարարում (14): Ի՞նչպես յուղել տրակտորը (16): Վառելանյութերի
պատրաստումը (20): Տրակտորը վառելը (26): Տրակտորի աշխատան-
քը (37) Սառեցում (41): Տրակտորի աշխատանքի թերությունները (45):
Գործիքներ (47): Ընթացիկ խնամք (48): Ի՞նչ աշխատանքներ կարող է
կատարել տրակտորը (51):

За ответственного редак-
тора
А. Г. Авакиан
За техредактора
М. Папазиан

№ 60
1931—X

Сд. в набор 26/IX—1931 г.
Сд. в печать 9/X—1931 г.
Объем 1²/₄ печ. листа
Тираж 1500 экз.

Ростов н-Д. Газетно-книжн. тип. СККПО.
Уполкрайлит № 320. Ст. ф. Бб 125x176.

Зак. № 3573—15 0

«Ազգային գրադարան»



NL0291490

9555 6 15 400.

54520

16328

н. п. 3. 0



На армянском языке

Ю. Т А Р А Н
(Зайченко)

ЧТО ДОЛЖЕН ЗНАТЬ ТРАКТОРИСТ

Сов.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ“